

9. **Փալստյան Ս.** «Խառը» («նախաձանցավերջաձանցավոր» և «բարդաձանց») բաղադրությունները հայերենում // ԲԵՀ.- Ե., 1997.- N 3:
10. **Փալստյան Ս.** Բուն (իսկական) բարդ և ածանցավոր բառերի կազմության քայլերի բանաձևման փորձ // ԲԵՀ.- Ե., 2002.- N 1:

Ա.Շ. ПЕТРОСЯН

СТРУКТУРНО-СМЫСЛОВОЙ АНАЛИЗ АРМЯНСКИХ НАУЧНО-ТЕХНИЧЕСКИХ ТЕРМИНОВ

Обсуждаются структурные особенности армянских эквивалентов научно-технических терминов, которые обусловлены их смысловыми признаками.

Ключевые слова: системность терминов, смысловая точность термина, структура термина.

H.Ts. PETROSYAN

A SEMANTIC AND STRUCTURAL ANALYSIS OF ARMENIAN SCIENTIFIC AND TECHNICAL TERMS

The structural characteristics of the Armenian equivalents of scientific and technical terms are considered conditioned by their semantic peculiarities.

Keywords: systematic nature of terms, semantic accuracy of a term, term structure.

ՀՏԴ 81'373.46: 811.111

Հ.Ս. ՂԱԶՈՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննվում են անգլերեն տեխնիկական տերմինների իմաստային որոշ առանձնահատկություններ: Ցույց են տրվում բառի տերմինացման որոշ իրողություններ անգլերենում:

Առանցքային բառեր. տերմինաբանություն, տեխնիկական տերմին, նշանակություն, հասկացություն, դասակարգում, մենիմաստ բառեր, բազմիմաստ բառեր, գիտակարգ:

Ներածություն: Տեխնիկական տերմինների ընտրության և կառուցման համար կան որոշակի պահանջներ: Այդ պահանջները բավարարող ցանկացած տերմինի ձևավորման համար օգտագործվում են լեզվական տարբեր միջոցներ: Գիտատեխնիկական տարբեր բանազավառներում և գիտակարգերում տերմինաբանության վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական տերմինների կազմավորման տարածված եղանակներից են **ածանցումը, բառաբարդումը, հապավումը**

վումը, ինչպես նաև **բառի նշանակության փոփոխությունը**: Ժամանակակից տերմինները կառուցվում են լեզվում գոյություն ունեցող բառա-միավորների հիման վրա: Մասնավորապես՝ անգլերեն տեխնիկական տերմինների կազմավորման առավել կարևոր եղանակը բառերի նշանակությունների փոփոխությունն է: Որպես տեխնիկական տերմին հաճախ օգտագործվում է արդեն գոյություն ունեցող համագործածական բառը, որը տերմինների տվյալ համակարգում ստանում է որոշակի բովանդակություն, քանի որ այդ բառի՝ նախկինում ունեցած նշանակություններին ավելանում է ևս մեկ նոր նշանակություն:

Սույն աշխատանքի քննության առարկան են անգլերենի այն համագործածական բառերը, որոնք նշանակության փոփոխության հետևանքով վերածվել են տեխնիկական տերմինների [1, 2, 3, 4]:

Տեխնիկական տերմինների իմաստային դասակարգումը: Տեխնիկական տերմինաբանության մեջ ներառվում են տեխնիկական գիտակարգերի կոնկրետ կամ վերացական հասկացություններ նշող բառեր կամ արտահայտություններ (գործիքների, սարքերի, մեխանիզմների, աշխատանքային գործողությունների, չափման միավորների և այլնի անվանումներ) [5]: Տերմինները հիմնված են հասկացությունների դասակարգման վրա՝ արտացոլելով դրանց առանձնահատկությունները [6,7]: Այսպիսով, տեխնիկական ցանկացած գիտակարգի տերմինաբանությունը ոչ թե առանձին բառերի, բառակապակցությունների կամ ծածկագրային նշանների կամայական միասնությունն է, այլ որոշակի տերմինաբանական համակարգ է [8]: Վերջինիս կազմի մեջ մտնող տերմինները պետք է արտացոլեն այն օբյեկտիվ կապերը, որոնք գոյություն ունեն համապատասխան հասկացությունների միջև: Տեխնիկական տերմինի վերածվելու պահին բառի ունեցած նշանակության և նոր ձեռք բերվածի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները համապատասխանում են համագործածական բառի նշանակությունների՝ տեխնիկական տերմինաբանության մեջ փոփոխման չորս հիմնական տեսակներին:

Որևէ բնագավառում նոր տերմինի կառուցման համար ելքային նյութ կարող են ծառայել համագործածական բառը կամ այլ բնագավառի տերմինաբանական համակարգում որպես տերմին օգտագործվող բառը [7, 9]: Տերմինի նշանակության փոփոխության հնարավոր դեպքերը կարող են լինել չորս տեսակ՝ 1. *տերմինի նշանակության դասակարգման փոփոխությունը*, 2. *տերմինի նշանակության ճշգրտումը և փոփոխումը*, 3. *տերմինի նշանակության փոփոխությունը՝ ըստ հասկացությունների համանմանության և 4. տերմինի նշանակության փոփոխությունը՝ ըստ հասկացությունների հարակցության* [8]:

1. Տերմինի նշանակության դասակարգման փոփոխությունը

Տեխնիկական տերմինաբանության մեջ տեղի է ունենում տերմինի փոխանցումը սեռային հասկացությունից տեսակայինի: Օրինակ՝ անգլերեն լեզվում

հաշվողական տեխնիկայի տերմինաբանության մեջ **computer** (համակարգիչ) սեռային տերմինն ունի տեսակներ՝ **hybrid computer** (համօրինակային և թվային շրջույթների զուգակցում համակարգչի մեջ), **digital computer** (համակարգիչ, որը տվյալները մշակում է թվային տեսքով), **analog computer** (համակարգիչ, որը տվյալները մշակում է համօրինակային տեսքով): Տերմինի սեռային հասկացությունից տեսակայինի փոխանցումը կատարվում է, եթե տվյալ հասկացությունների համակարգում կիրառվում է միայն տեսակային հասկացությունը, և անհրաժեշտություն չկա ստեղծել տեսակային հատկությունը նշող մի նոր, առանձին տերմին: Դա ճիշտ կլինի միայն այն դեպքում, եթե սեռային տերմինը հստակ է ու հակիրճ, և, այդ դեպքում տերմինների մնացած բոլոր տեսակային հասկացություններն արտահայտելու համար պետք է նշել տեսակի հատկությունը:

2. Տերմինի նշանակության ճշգրտումը և փոփոխումը

Գիտության և տեխնիկայի զարգացման հետ հնացած հասկացությունների մի մասը դուրս է մղվում, մյուսները փոփոխվում ու զարգանում են: Այդպիսի հասկացություններ նշող տերմինները երբեմն փոխարինվում են մյուսներով, ընդ որում՝ դրանց իրական նշանակությունը կամ բովանդակությունը փոխվում է:

Տերմինները սովորաբար գործածվում են նոր նշանակությամբ: Սակայն հաճախ տերմինները կարող են կիրառվել միաժամանակ նոր ու հին նշանակություններով: Այդ դեպքում առաջանում է տերմինի ժամանակավոր բազմիմաստություն: Սակայն, քանի որ տվյալ բնագավառում տերմինը միանշանակ է [8], այսինքն՝ զուրկ է բազմիմաստությունից, ապա ձևափոխված հասկացության համար անհրաժեշտ է ստեղծել նոր տերմին կամ հին տերմինին ավելացնել պայմանանշաններ, որոնք ընդգծում են, թե որ նշանակությամբ է վերջինս կիրառվում: Այսպես, օրինակ՝ **processor** տերմինն արտահայտում է **մշակիչ** իմաստը, այն է՝ սարքակազմային կամ ծրագրակազմային սարք, որը, հրահանգների համաձայն, կառավարում է կամ ձևափոխում տվյալները: Այս տերմինի իմաստը համատեքստում մասնավորեցնելու համար վերջինիս հետ կիրառվում են որոշակի բառեր, որոնք տերմինի նշանակություն են ստանում: **Language** բառի հետ գործածվելիս վերջինս նշանակում է **լեզվի մշակիչ**: Այն ծրագիր է, որը մի լեզվից փոխադրում է մեքենայական կոդի (կա երեք տեսակի փոխադրիչ՝ փոխադրածրագիր, կազմարկիչ և մեկնաբանիչ): **Network** բառի հետ գործածվելիս վերջինս արտահայտում է **ցանցային մշակիչ** իմաստը: Այն կառավարվում է ցանցում գտնվող մանրամշակիչի կողմից: Իսկ **image** բառի հետ գործածվելիս այն ստանում է **պատկերի մշակիչ** իմաստը: Վերջինս էլեկտրոնային համակարգ է, որն օգտագործվում է պատկերի մշակման համար: Նույնը կարող ենք ասել **adapter** տերմինի մասին, որն ունի **հարմարիչ** իմաստը: Այն սարք է, որը թույլ է

տալիս միացնել երկու կամ ավելի անհամատեղելի սարքեր: **Adapter** տերմինի իմաստը համատեքստում հստակեցնելու համար վերջինիս հետ օգտագործվում են տերմինի արժեք ձեռք բերող բառեր: Այսպես, օրինակ՝ **network adapter** տերմինը նշանակում է **ցանցային հարմարիչ**: Վերջինս լրացուցիչ հարթակ է, որը համակարգիչը միացնում է ցանցին: **Graphics adapter** տերմինն արտահայտում է **գրաֆիկական հարմարիչ** իմաստը: Վերջինս էլեկտրոնային սարք է, որը տրամադրում է ծրագրային հրամաններ և դրանք փոխարկում էլեկտրական ազդանշանների, որոնք ցուցադրում են գրաֆիկական պատկերները:

3. Տերմինի նշանակության փոփոխությունը՝ ըստ հասկացությունների համանմանության

Լեզվի համագործածական շերտի բառերի նշանակության փոփոխման այս եղանակը լայն կիրառություն ունի անգլերեն տեխնիկական տերմինաբանության մեջ: Երբեմն տերմինի փոփոխման համար բավական է, որ մեկ առարկայի հատկությունը կամ երևույթն ինչ-որ մի բանով հիշեցնի մյուս առարկայի հատկությունը կամ երևույթը: Նմանությունը դառնում է բառի՝ որպես տերմինի փոխաբերականացման հիմք է: Այսպես, օրինակ՝ **library** (գրադարան՝ տարածք գրքերի պահպանման և ընթերցանության համար) տերմինը անգլերեն տեխնիկական տերմինաբանության մեջ հասկացությունների համանմանության սկզբունքի համաձայն՝ նշանակում է **պահոց, դարան**: Նույնը կարելի է ասել **պսակ** իմաստն արտահայտող **corona** բառի մասին: Վերջինիս փոխաբերական անցման հիմքում հասկացությունների համանմանության սկզբունքն է, որի համաձայն՝ տեխնիկական տերմինաբանության մեջ նույնպես նշանակում է **պսակ**, այն է՝ էլեկտրական լիցքաթափում, որն օգտագործվում է լազերային տպիչում ներկափոշին լիցքավորելու համար: **Պայուսակ, պարկ, փոպրակ** իմաստներն արտահայտող **bag** բառային միավորի փոխաբերական տեղաշարժի հիմքում նույնպես հասկացությունների համանմանության սկզբունքն է: Վերջինս, հիշյալ սկզբունքի համաձայն, անգլերեն տեխնիկական տերմինաբանության մեջ արտահայտում է **փոպրակ** իմաստը, այն է՝ չկարգավորված տարրերի հավաքածու:

Ըստ հասկացությունների համանմանության սկզբունքի՝ տերմինի փոխաբերական անցման հնարավոր դեպքերը կարելի է միավորել երկու խմբի մեջ.

1) Տերմինի անցումն ըստ հասկացությունների համանմանության, եթե հասկացությունների միջև առկա է տեխնիկական կապ, ինչպես օրինակ՝ **accumulator** տերմինը, որը անգլերեն տեխնիկական տերմինաբանության մեջ ունի **մարդկոց** և **կուտակիչ** իմաստները: Վերջիններիս հիմքում **accumulate** բայն է, որն արտահայտում է **կուտակել, հավաքել, դիզել** իմաստները: Այստեղից էլ սկիզբ են առնում **մարդկոց** և **կուտակիչ** տերմինների իմաստները:

Մարդկոցը մի շարք միատեսակ մասերից կամ տարրերից կազմված զանազան գործիքների և սարքերի ընդհանուր անվանումն է, իսկ **կուրակիչը** կենտրոնական մշակիչ հանգույցի ամենակարևոր գրանցատեղն է:

2) Տերմինի անցումն ըստ հասկացությունների համանմանության, եթե այդպիսի կապ նրանց միջև չկա [8]: Այսպես, օրինակ՝ **address** բառային միավորն անգլերենում արտահայտում է **հասցե, դիմում, ճան** իմաստները: Հասկացությունների համանմանության սկզբունքի համաձայն՝ անգլերենում տեխնիկական տերմինաբանության մեջ վերջինս ունի **հասցե** իմաստը, այսինքն՝ թիվ, որը կենտրոնական միացման համակարգին թույլ է տալիս միանալ համակարգչի հիշողության որոշակի ֆիզիկական տեղամասին:

Տեխնիկայում հաճախ որևէ հասկացության անվանման համար օգտագործում են արդեն այլ բնագավառի հասկացություն նշող տերմիններ, ընդ որում՝ գործընթացները կամ տեխնիկական առարկաներն անվանող հասկացությունները տեխնիկական տեսանկյունից ունեն ինչ-որ ընդհանրություն: Առարկայական հասկացություններ անվանող տերմինների փոխաբերական անցումն իրականացվում է նմանության կամ երբեմն կիրառության նույնական լինելու, գործողության սկզբունքի, կառուցվածքի շնորհիվ: Գործընթացներ նշող տերմինների փոխաբերական անցման հիմք կարող են դառնալ երևույթների միանման մեկնաբանությունը, տեխնիկական նպատակների համար միևնույն կիրառության հնարավորությունը: Այդպիսի փոփոխությունը կարող ենք անվանել տերմինի անցում՝ **ըստ տեխնիկական համանմանության**: Այսպես, օրինակ, **conductor** տերմինն առաջին անգամ կիրառվել է ռադիոտեխնիկայում, իսկ այնուհետև այն սկսել են օգտագործել հեռուստամեխանիկայում՝ պատկերների էլեկտրական հաղորդման մեջ: **Compressor** տերմինն օգտագործվում է և՛ տեխնիկական, և՛ բժշկագիտական, և՛ ռազմական տերմինաբանության մեջ: Վերջինս տեխնիկական տերմինաբանության մեջ արտահայտում է **խտացուցիչ** իմաստը: Այն **ծրագիր** է կամ **սարք**, որը կատարում է տվյալների խտացում:

Այսպիսով, վերը նշված օրինակները վկայում են, որ տերմինի փոխանցումը կատարվում է համապատասխան առարկաների տեխնիկական գործառույթի համանմանության համաձայն: Միևնույն ժամանակ, այստեղ առկա է գործողության սկզբունքների և կառուցվածքի որոշ համանմանություն:

Բառի կամ տերմինի անցումն արտաքին համանմանության համաձայն կարող է կատարվել տարբեր հատկանիշների նմանությամբ: Անցման համար հիմք կարող է ծառայել նաև այն իրողությունը, որ մի առարկայի առանձին մասն իր արտաքին տեսքով նման է մյուս առարկային: Այսպես, օրինակ՝ արտաքին համանմանության համաձայն **cell** տերմինն անգլերենում արտահայտում է **բջջ**

իմաստը, այն է՝ հաշվաթերթի մեկ բջիջը, **root** տերմինը՝ **արմատ** իմաստը: Արտաքին համանմանության համաձայն՝ տեխնիկական տերմինաբանության մեջ վերջինս ունի միևնույն իմաստը: Այն մի հանգույց է, որից ճյուղավորվում են տվյալների ծառի բոլոր ուղիները: Երբեմն իբրև տերմին օգտագործվում է գործառույթի անվանումը, ինչպես, օրինակ՝ **scanner** տերմինը: Վերջինս սարք է, որի գործառույթն է լուսաէլեկտրական բջիջների միջոցով պատկերի փոխարկումը գրաֆիկական տվյալների:

Տեխնիկայի տարբեր բնագավառներում տերմինահամակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեխնիկական տերմինների կազմավորման այս եղանակը լայն կիրառություն ունի տերմինաբանության մեջ: Այսպիսով, արտաքին համանմանության եղանակով տեխնիկական տերմինաբանություն են անցնում բառեր ու բառակապակցություններ, որոնք տերմին են դառնում նաև տեխնիկական այլ գիտակարգերի կամ ճյուղերի տերմինաբանական համակարգերում:

4. Տերմինի նշանակության փոփոխությունը՝ ըստ հասկացությունների հարակից լինելուն

Ըստ հասկացությունների հարակից լինելուն՝ տերմինի նշանակության անցումը տարբերվում է մյուս տեսակներից: Կարելի է առանձնացնել անցումների մի քանի տեսակ՝ հիմք ընդունելով հասկացությունների կարգը: «Հատկություն» կամ «գործընթաց» նշող տերմինը կարող է փոխանցվել այդ գործընթացը բնութագրող քանակական ցուցանիշ արտահայտող տերմինի, ինչպես, օրինակ՝ **էլեկտրական հոսանք** ասելով՝ նախկինում հասկանում էին և այժմ էլ հաճախ հասկանում են միայն որոշակի երևույթ, որի քանակական ցուցանիշը նշելու համար կիրառվում է **հոսանքի ուժ** տերմինը:

Բավականին տարածված են գործընթաց արտահայտող տերմինի՝ գործընթացի ընթացքի կամ դրա արդյունքի հետ կապված հասկացությունների անցման դեպքերը և հակառակը, ինչպես, օրինակ՝ **programming (ծրագրավորում)**, **printing (տպում)**, **processing (մշակում)**, **accounting (հաշվապահական ծրագրավաթեթ)**, **logging (մուտք գործում)**, **building (ձևավորում, ստեղծում)**, **accelerating (արագացում)** գործընթացները:

Ըստ հասկացությունների հարակից լինելուն՝ տերմինի անցումն իրականացվում է տարբեր գիտակարգերի հասկացությունների միջև: Այդ գործընթացը հաճախ կիրառվում է նաև միևնույն գիտակարգի պատկանող հասկացությունների միջև, սակայն այս դեպքում հասկացությունները դառնում են անհասկանալի, և սա հանգեցնում է գործնական սխալների: Այստեղից հետևում է, որ տերմինների կազմավորման այս միջոցը նպատակահարմար չէ, քանի որ վերջինս հանգեցնում է հասկացությունների բազմիմաստությանը և ոչ հստակ ընկալմանը:

Եզրակացություն: Կարելի է նշել, որ տեխնիկական տերմինի նշանակության փոփոխության հնարավոր դեպքերն են տերմինի նշանակության դասակարգման փոփոխությունը, տերմինի նշանակության ճշգրտումը և փոփոխումը, տերմինի նշանակության փոփոխությունը՝ ըստ հասկացությունների համանմանության, և տերմինի նշանակության փոփոխությունը՝ ըստ հասկացությունների հարակից լինելու: Ընդ որում՝ անգլերենում առավել արդյունավետ միջոց է տերմինի նշանակության փոփոխությունը՝ ըստ հասկացությունների համանմանության, քանի որ վերջինս գործում է տարբեր գիտակարգերի տերմինաբանության մեջ և հեշտացնում տարբեր ոլորտներում տերմինաբանության համալրման հնարավորությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գրիգորյան Խ.** Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան.- Երևան: «Անկյունաքար» հրատ, 2003.- 388 էջ:
2. **Գրիգորյան Վ., Կարապետյան Կ.** Անգլերեն-հայերեն համակարգչային և մաթեմատիկական եզրերի բառարան. - Ե., «Նորք գրատուն» հրատ., 2005.- 174 էջ:
3. **Հացագործյան Զ.Ա., Դարբինյան Ա.Հ., Հովումյան Ն.Գ., Սրվանձտյան Գ.Հ.** Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան. -Երևան, 1988.- 672 էջ:
4. **Ղազարյան Է., Ստեփանյան Ա.** Ինֆորմատիկա, ինտերնետ. Անգլերեն-ռուսերեն-հայերեն բացատրական բառարան.-Երևան, 2000.- 320 էջ:
5. **Базылев В.Н.** Технический перевод. Основные понятия переводоведения (Отечественный опыт). Терминологический словарь-справочник /Отд. языкознания; Отв. редактор канд. филол. наук М.Б. Паренко. - М., 2010.- 260 с.
6. **Պետրոսյան Հ.Ց.** Տերմինագիտության հիմունքներ.- Երևան, 2010.- 304 էջ:
7. **Шмелева О.Ю.** Прототипическая организация терминосистемы (на материале номинаций в финансово-экономической сфере) // Известия Санкт-Петербургского университета экономики и финансов.- 2010.- №5 (71).- С. 80-84.
8. **Лотте Д.С.** Основы построения научно-технической терминологии. Вопросы теории и методики. -М.: Изд-во АН СССР, 1961.- 158 с.
9. **Кочергин В.И.** Большой англо-русский толковый научно-технический словарь компьютерных информационных технологий и радиоэлектроники: В 9-ти томах. - Томск: Изд-во Том. ун-та, 2016.- 4093 с.

А.С. КАДЖОЯН

НЕКОТОРЫЕ СМЫСЛОВЫЕ ОСОБЕННОСТИ ТЕХНИЧЕСКИХ ТЕРМИНОВ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Рассматриваются некоторые смысловые особенности технических терминов английского языка. Термины проникают в любую область науки и выделяют вновь созданные и уже существующие понятия техники, которые служат названиями новых реалий и явлений.

Существуют определенные требования к выбору и построению технических терминов английского языка. Для образования технического термина английского языка можно использовать различные лингвистические приемы. Анализ терминологии в различных технических дисциплинах и отраслях показывает, что к наиболее распространенным способам образования технических терминов английского языка относятся аффиксация, словосложение, аббревиатура, но существует и другой путь образования технических терминов, а именно – изменение значения слова.

Самый важный способ образования технических терминов английского языка – это изменение значений слов. В качестве технического термина часто используется уже существующее разговорное слово, которое приобретает определенное содержание в данной системе терминов, поскольку к прежним значениям этого слова добавляется еще одно новое значение.

Ключевые слова: технический термин, значение, терминология, понятие, классификация, однозначные слова, многозначные слова, дисциплина.

H.S. GHAJOYAN

SOME SEMANTIC FEATURES OF TECHNICAL TERMS IN ENGLISH

Some semantic features of technical terms in English are considered. The terms penetrate into any field of science and reveal newly created and already existing concepts of technology which serve as names of new realities and phenomena.

There are certain requirements for the selection and construction of technical terms in English. Different linguistic devices can be used to form any term that meets those requirements. It is true that the analysis of terminology in various technical disciplines and branches shows that the common ways of forming technical terms in English is affixation, compounding and abbreviation, but there is another way of forming technical terms that can change the meaning of the word.

The most important way of forming technical terms in English is changing the meanings of the words. The word, already existing in the language, is often used as a technical term. The latter acquires a certain meaning in the given system of terms because another new meaning is added to the previous meanings of that word.

Keywords: technical term, meaning, terminology, concept, classification, monosemantic words, polysemantic words, discipline.